ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«21» 10 2025 թ.
No 012582

«ԱՐՄՖՐՈՒԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ
(Հասցե՝ Երևան, Արաբկիր, Կոմիտասի պող., 49, 0051)

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) կողմից գյուղատնտեսական արտադրանքի մթերման ոլորտում իրականացվող ուսումնասիրության շրջանակում, «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորությունն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված և ղեկավարվելով Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն 2025 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Ընկերության կետանցված պարտավորությունների վերաբերյալ՝ համաձայն Ձևանմուշի՝ կցելով մթերումները և վճարումները հավաստող փաստաթղթերի պատճենները:

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն

սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

4. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

5. Օրենքի 79-րդն հոդվածի 2-րդ մասի 2.1 կետի համաձայն՝ Վարույթի հարուցման առիթների քննարկման շրջանակում տնտեսավարող սուբյեկտների կողմից Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու պարտականության խախտման դեպքում Հանձնաժողովը կարող է հաստատված համարել տվյալ տնտեսավարող սուբյեկտի վարքագծում կամ գործողություններում իրավախախտման հատկանիշների առերևույթ առկայության փաստը և հարուցել վարույթ:

6. Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի, ոչ ամբողջական, ապակողմնորոշիչ տեղեկություններ ներկայացվելու կամ սեփական նախաձեռնությամբ Հանձնաժողով ոչ հավաստի, կեղծ, ապակողմնորոշիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

7. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

8. ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով վարչական վարույթով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

9. Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ 1 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Կարլոս Մարգարյան
Մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (208)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 27 նոյեմբերի 2025 թվական:

Ձևանմուշ

2025 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ գյուղատնտեսական արտադրանքի մթերումից առաջացած 30 օրը գերազանցող մարված և չմարված պարտավորությունների չափի վերաբերյալ

ՀՀ	Հոկտեմբերի 1							
	Պարտատիրոջ անուն, ազգանուն, հայրանուն/ Իրավաբանական անձի անվանում	Մթերված ապրանքի անվանումը	Կետանցված պարտավորության ձևավորման ամսաթիվը*	Կետանցված պարտավորության չափը	Կետանցված պարտավորության վճարման ամսաթիվը	Մարված կետանցված պարտավորության չափը	Վճարված տոկոսագումարի չափը (ՀՀ դրամ)**	Պարտատիրոջ հեռախոսահամարը
1								
2								
3								
...								

* Կետանցված պարտքը մթերումից հետո 30 օրը գերազանցող պարտավորությունն է գյուղմթերք մատակարարողի նկատմամբ:

** Այս սյունակը լրացվում է այն պարագայում, երբ կետանցված պարտավորությունները մարվել են կետանցված պարտավորության ձևավորումից 30-օրյա ժամկետում՝ համաձայն Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի:

1. Տեղեկանքն էլեկտրոնային եղանակով անհրաժեշտ է ուղարկել info@competition.am և karlos.margaryan@competition.am էլ. հասցեներով:

2. Հավելյալ տողերի անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է ավելացնել դրանք:

3. Տեղեկանքի յուրաքանչյուր էջ անհրաժեշտ է վավերացնել կազմակերպության կնիքով և ստորագրությամբ:

4. Ձևանմուշի էլեկտրոնային տարբերակը ստանալու համար անհրաժեշտ է էլեկտրոնային նամակ ուղարկել karlos.margaryan@competition.am հասցեով՝ նամակի "subject" կամ "тема" դաշտում նշելով "Form" բառը:

5. Եթե պարտավորությանը մեկ պարտատիրոջ մասով կատարվել է առանձին ամսաթվերի, ապա պարտավորության յուրաքանչյուր մարման դեպքում անհրաժեշտ է առանձին լրացնել և՛ պարտավորության մարման ամսաթիվն ու պարտավորության չափը և՛ վճարված տոկոսագումարները:

ն, ապա անհրաժեշտ է, որ պարտավորության յուրաքանչյուր չափով մարման դեպքում լրացնել և՛ պարտավոր